Պատմության օլիմպիադայի դպրոցական փուլ (2024-2025 ուստարի)

12-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

1. Արմանի երկրի գլխավորությամբ Հայկական լեռնաշխարհի և հարակից քանի՞ պետական կազմավորումների դաշինք է ձևավորվել Նարամսինի դեմ.
   1/ 10 2/ 25 3/ 17 4/ 29
2. Բագրատունի ո՞ր արքայի օրոք է առաջացել Վանանդի թագավորությունը.
   1/ Սմբատ II 2/ Աբաս 3/ Գագիկ I 4/ Աշոտ III
3. Ո՞վ էր Թիֆլիսում սպանված ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղարը.
   1/ Աշոտ Հովհաննիսյան 2/ Աղասի Խանջյան 3/ Սարգիս Լուկաշին 4/ Սահակ Տեր-Գաբրիելյան
4. Ո՞ր շրջանում է իր կատարած գործունեությամբ է աչքի ընկել Թորոս Ծառուկյանը.
   1/ Կեսարիա 2/ Կարին 3/ Մալաթիա 4/ Սեբաստիա
5. Ե՞րբ են մոնղոլները գրավել Տարոնը.
   1/ 1236 թ. 2/ 1242 թ. 3/ 1243 թ. 4/ 1244 թ.
6. Որքա՞ն էր սելջուկ-թյուրքերի բանակի թիվը դեպի Հայաստան առաջին արշավանքի ժամանակ.
   1/ 20 հազար 2/ 30 հազար 3/ 70 հազար 4/ 100 հազար
7. Ո՞ր թվականին է Լվովում հիմնվել տեղի հայկական առաջին տպարանը.
   1/ 1565 թ. 2/ 1638 թ. 3/ 1666 թ. 4/ 1616 թ.
8. Ե՞րբ է գործարկվել Երևանի արհեստական կաուչուկի գործարանը.
   1/ 1937 թ. 2/ 1940 թ. 3/ 1935 թ. 4/ 1933 թ.
9. Ե՞րբ է տեղի ունեցել Կատալաունյան դաշտի ճակատամարտը.
   1/ 451 թ. 2/ 486 թ. 3/ 496 թ. 4/ 751 թ.
10. Ո՞վ է 1851 թ. Ֆրանսիայում իրականացրել պետական հեղաշրջում, այնուհետև հաջորդ տարի հանրաքվեի միջոցով պետությունը պաշտոնապես վերափոխել կայսրության.
    1/ Ֆիլիպ Օգոստոս 2/ Վիլհելմ Օրանցի 3/ Լուի Նապոլեոն 4/ Նապոլեոն Բոնապարտ
11. Ո՞վ է «Ուտոպիա» ստեղծագործության հեղինակը.
    1/ Կամպանելա 2/ Թոմաս Մոր 3/ Սերվանտես 4/ Էրազմ Ռոտերդամցի
12. Նշված երկրներից ո՞րն է նվաճվել Ավստրո-Հունգարիայի կողմից Առաջին աշխարհամարտում.
    1/ Բուլղարիա 2/ Սերբիա 3/ Ռումինիա 4/ Չեռնոգորիա
13. Նշվածներից ո՞վ է մասնակցել աշխարհում առաջին հանրագիտարանի խմբագրմանը.
    1/ Շ. Մոնտեսքյո 2/ Ի. Նյուտոն 3/ Մ. Ֆարադեյ 4/ Ժ. դ'Ալամբեր
14. Ընտրե՛ք Զաքարյանների իշխանապետության շրջանին վերաբերող դեպքերի՝ ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ տարբերակը:
    ա/ Անիի ազատագրումը
    բ/ Ամբերդի ազատագրումը
    գ/ Սարգիս Զաքարյանի նշանակումն ամիրսպասալար
    դ/ Կարսի ազատագրումը
    ե/ Խլաթի ձախողումը
    զ/ հայ-վրացական հակամոնղոլական ապստամբությունը

    1/ բ, դ, զ, ա, ե, գ 2/ բ, զ, դ, ա, ե, գ 3/ գ, բ, զ, ա, ե, դ 4/ գ, բ, ա, դ, ե, զ

15. Ընտրե՛ք ճիշտ զույգերով տարբերակը:

1. Նելսոն Ստեփանյան	ա/ 390-րդ դիվիզիայի հրամանատար
2. Լազր Զափչախյան	բ/ ԽՍՀՄ կրկնակի հերոս
3. Սերգեյ Բուռնազյան	գ/ Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ առաջին հայ հերոս
4. Նվեր Սաֆարյան	դ/ Կործանիչ ավիագնդի ավիաէսկադրիլիայի հրամանատար
5. Սիմոն Զաքյան	ե/ Թամանյան դիվիզիայի հրամանատար
6. Բենիամին Գալստյան	զ/ Գեներալ-մայոր

    1/ 1-ե, 2-բ, 3-ա, 4-զ, 5-դ, 6-գ 2/ 1-բ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-դ, 6-գ
    3/ 1-ե, 2-բ, 3-զ, 4-ա, 5-գ, 6-դ 4/ 1-բ, 2-գ, 3-դ, 4-ե, 5-ա, 6-զ

16. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները:
    1/ Ծումբի ճակատամարտում հայ-վրացական ուժերը պարտության են մատնել Սաջյան ամիրա Մամլանի բանակը:

2/ Տարոնի զավթումից հետո Բյուզանդիան չի կարողացել անմիջապես գրավել ազատատենչ Սասունը:
3/ Մովսես Տաթևացին հիմնել է Երևանի Անանիա առաքյալի անապատը:
4/ Անանիա Մոկացի կաթողիկոսը 948 թ. կաթողիկոսական աթոռն Արգինայի վանքից տեղափոխել է Կարսից հյուսիս գտնվող Անի:
5/ 10-րդ դ. սկզբին Տաթևի վանքին պատկանում էր 112 գյուղ:
6/ Դավիթ Անհողինն ընդարձակել է իր թագավորության սահմաններն ի հաշիվ Դվինի և Տփղիսի ամիրայությունների:

17. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ ընտրե՛ք տերմինների ճիշտ բացատրությունները:

1/ Նէպի տարիներին իրենց աշխատանքի շնորհիվ կայուն գյուղացիական տնտեսություն ստեղծած ունևոր գյուղացիների խավը հայտնի էր կուլակ անվանումով:
2/ 1923 թ. նոյեմբերին Երևանում գումարված այն համաժողովը, որտեղ հնչակյանները հանդես եկան իրենց վերացման մասին հայտարարությամբ, կոչվեց ինքնավերացման համագումար:
3/ Լենինի մահից հետո Լ. Տրոցկու, Ի. Ստալինի և Լ. Կամենևի գլխավորությամբ հանդես եկած ընդդիմությունը հայտնի է տրոցկիստական անունով:
4/ 1930-ական թթ. կեսից ԽՍՀՄ-ում հաստատված համակարգը հայտնի է էգալիտար անունով:
5/ Այն կազմակերպությունը, որին Հայոց եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»:
6/ Նապոլեոնյան պատերազմներից հետո ստեղծված եվրոպակենտրոն նոր աշխարհակարգն ընդունված է անվանել Վեստֆալյան համակարգ կամ «եվրոպական համերգ»:

18. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք սխալ պնդումները:

1/ Արևմտյան Հայաստանի հյուպարքոս Տիրիբազը Երվանդ III սատրապի ենթական էր:
2/ Արտավազդ II-ը 40 հազար հետևակ է առաջարկել Կրասոսին՝ պարթևների դեմ արշավանքին մասնակցելու համար:
3/ Հռանդեայի պայմանագրով նախատեսված էր, որ Մեծ Հայքի թագավորի թեկնածությունն առաջարկելու էր Պարթևստանի արքան, իսկ հաստատելու՝ Հռոմի կայսրը:
4/ Սոհեմոս արքան Մեծ Հայքում գահակալել է երկու անգամ, իսկ այդ երկուսի միջակայքում իշխել է Բակուրը:
5/ Արշամ արքան կառուցել է Արշամաշատ քաղաքը Ծոփքում:
6/ Արտաշես I-ը երկարատև պայքարի արդյունքում Սելևկյաններից ազատագրել է Տմորիքը:
7/ Նանե աստվածուհու պաշտամունքի կենտրոնը գտնվում էր Թիլ ավանում:

19. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները:

1/ Հռոմկլան Թորոս II-ի օրոք դարձել է կաթողիկոսական նստավայր և այդ կարգավիճակը պահպանել մինչև Եգիպտոսի մամլուքների կողմից նվաճումը 1292 թ.:
2/ Գագիկ Աբասյանն իր թագավորության դիմաց Բյուզանդիայից ստացել է Արևելյան Տավրոսում գտնվող Ծամնդավ բերդաքաղաքը:
3/ Ապլղարիպ Արծրունուն են պատկանել Ադանա, Մսիս, Տարսոն, Լամբրոն և Անտիոք քաղաքները:
4/ Վանի թագավորության գերիշխանության սահմանները Արգիշտի I-ի օրոք ընդգրկում էին Փոքր Ասիայի արևելյան պետությունները, մերձուրմյան ավազանի մի քանի երկրներ և Բաբելոնիան:
5/ Հայասայի Կարանի արքան, դաշինք ստորագրելով Խեթական թագավորության հետ, ամուսնացել է նրանց արքայի քրոջ հետ:
6/ Ռուսա I-ի օրոք Վանի թագավորության բանակում առանձնացվել է «արքայական գունդը» (հեծյալ զորամիավորումներից բաղկացած ընտրյալ ուժեր), ձևավորվեցին «մարզային զորքերը»:
7/ Արտաշատ մայրաքաղաքի բնակչության թվաքանակն Արտաշես I-ի օրոք 120 հազար էր:
8/ Վասպուրականի թագավորությունում կար շուրջ 1000 գյուղ:
9/ Խամսայի մելիքություններում ավագությունը պատկանում էր Խաչենի Հասան-Ջալալյաններին, որոնց մեծանուն ներկայացուցիչ մելիք Եգանն առանձնակի հավատարմություն էր ցուցաբերել Նադիր շահի նկատմամբ:

20. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք սխալ պնդումները:

1/ 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը Նյու Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսի նախաձեռնող կազմակերպությունը կոչվում էր Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդ:

2/ Մինչև 1991 թ. նոյեմբերի կեսերը նոր ինքնիշխան պետությունների ղեկավարների քննարկած միութենական պայմանագրի նախագծի վերջնական տարբերակում նոր միությունը բնութագրվում էր որպես «համադաշնային ժողովրդական պետություն»:
3/ 1987 թ. հունիսի 18-ին Հայոց ցեղասպանությունը դատապարտվել է Եվրասիական միության կողմից:
4/ 1920-ական թթ. ստեղծված գյուղացիական միացյալ տնտեսությունների ձևերից էին սովխոզները, արտելները, կոմունաները:
5/ 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի օրակարգում դրված հարցը վերնագրված էր՝ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Գերագույն խորհրդի միջնորդությունը՝ երկրամասը Ադրբեջանական ԽՍՀ-ից հանելու և Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու մասին»:
6/ Ստալինյան բռնաճնշումների զոհ են դարձել հայ զորահրամանատարներ Հայկ Բժշկյանցը, Ստեփան Շահումյանը, Գրիգոր Խանջյանը և ուրիշներ:
7/ 1993 թ. ապրիլին հայկական զորքերն ազատագրել են ռազմավարական նշանակություն ունեցող Քարվաճառի շրջանը:
8/ Շուշիի ազատագրման ռազմական օպերացիան կոչվել է «Հարսանիք լեռներում»:
9/ Երևանի կոնսերվատորիայի հիմնադրման գործում կարևոր դեր է խաղացել կոմպոզիտոր և մանկավարժ Ռոմանոս Մելիքյանը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

14.01.2025 թ.